Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

85

Սեղանի սեր

8
Ա-68

Բ.1903

№ 2003

2011

ԹԷՐԳՄ. Խ. ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆՑ

8+32
Ֆէ-63

Ամսական աէր

ԵՐԿՈՒ ՃՐՊՈՒՑ

II

Հոդեայ

№ 1

Տպարան
Եղբ. Թատրթիկիլաձէի
1903

ԹԱՐԳՄ. Խ. ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԾ

ԵՐԿՈՒ ՀՐՈՎՏ

I

Անչափի սէր

II

Ողբայ

№ 1

Տպարան
Եղբ. Թաւարթկիլիճէի
1903

Հ.Ս.Ս. Հայկական ՍՍՀ Գիտ. Ակադ. Գրադարան
ՀԱԽՀ — ССРА
161
36955/1009
32833
Ա-62

10145

Дозв. ценз. Тифлисъ, 28-го ноября 1903 года

ԱՆԶԱՓ ՍԷՐ

Ի. Տ.-ի

Նա, ծերացած ու թուլացած լինելու պատճառով, անկարող էր տանել իւր գլխին յաջորդաբար թափուող դժբաղդութիւնները այնպէս, ինչպէս կարող էր տանել մի երիտասարդ։ Իւր թարմ և ուժեղ գլխով։

Կորուստ կորստի յետևից, ննջեցեալ ննջեցեալի յետևից... դեռ նոր էր թաղել նա կնոջը, որի հետ ապրել էր երջանիկ մի քառորդ դար, երբ հիւանդացաւ ու մեռաւ անդրանիկ աղջիկը։ Իսկ յետոյ որդին... և դարձեալ աղջիկը... երեք տարուայ ընթացքում չորս կորուստ, չորս ննջեցեալ։

Խնկի հոտը նրա համար սովորական էր դառել, իսկ «հանդիսաւ սրբոց» սրտաճմլիկ մեղեդին—ա-

մենաստվորական երդեցողութիւն։

Բայց ճակատագիրը դեռ չէր խլել նրանից բոլորը։ Նա ունէր դարձեալ մի երեխայ—հանգուցեալ սիրելի կնոջ պատկերը—եօթը տարեկան մի աղջիկ Անեա անունով։

Նա ամբողջապէս իւր սիրոյ առարկան էր դարձրել այդ վերջին աղջկան, որին յափշտակել էր մահուան ճանկերից, ինչպէս թւում էր նրան։

Այն, ինչ առատօրէն բաւականանում էր չորսին, այժմ վիճակուել էր մէկին՝—անչափ և անսահման սէր... Այդ աղջիկն էր կազմում նրա բոլոր դիտաւորութիւնների, մտածմունքի առարկան, ամբողջ կեանքի նպատակը։ Նա էլ եղաւ հօր ողբերգական մահուան պատճառը։

Թէև Վոլկովիցկին իւր անձնական կեանքը վերջացած էր համարում, բայց և այնպէս, կնոջ մահից երկու տարի անց, ամուսնացաւ երկրորդ անգամ։

Մինչև նրան հարկաւոր էր մայր իւր սիրելի երեխայի համար։ Նա մտածում էր, որ մեծացող երեխայի կեանքը, առանց մտերիմ կնոջ գրգուանքի չի կարող կատարեալ լինել։ «Ընտրում եմ քեզ մայր աղջկաս համար՝ որի համար միայն ապրում եմ աշխարհումս»—Այդպէս էր նրա առաջարկութիւնը այն կնոջը, որի հետ միացաւ դէպի երեխան ունենալիք միահամուռ սիրոյ համար նրա ամբողջ բաղդաւորութեան համար։

Վոլկովիցկին իւր ընտրութեան մէջ չսխալուեց։ Այն օրուանից երկուսի կեանքն էլ լիովին նուիրուած էր աղջկանը։ Նա Աստուածութիւն էր նրանց համար, որին ծառայում և երկրպագում էին։

—Խնայեցէք, ասում էին Վոլկովիցկուն ծանօթները, չի կարելի այդ աստիճան երես տալ երեխային։ Ինչպէս ամեն բան, նոյնպէս և սէրը ունի իւր չափը։

—Իսկ ես սիրում եմ անչափ,— պատասխանում էր նա։

—Բայց դուք այդ կերպ փչացնում էք աղջկան. ստեղծում և պատրաստում էք ձեզ համար մի բռնակալ, որից առաջին արտասուողը դուք էք լինելու։

—Օ՜, ոչ, զուր է ձեր ասածը։ Նա հղեշտակ է։ Դեռ ինձ թւում է, որ ես չեմ սիրում նրան այնչափ, որքան հարկաւոր է։

Խօսել այդ մասին ծանօթների հետ զուր էր։

—«Սէրը անչափ չի կարող լինել»։ Ստում են նրանք, մտածում էր նա, ինչպէս չի կարող անչափ լինել կրակի տաքութիւնը, արևի լոյսը։

Նա հարուստ չէր։ Նրա համար բուսականութիւն էր զրկել իրեն ամեն բանից, միայն թէ ամեն ինչ առատ լինէր աղջկայ համար։

Նա սիրում էր երբեմնապէս ծլնել լաւ գլանակ, բայց որպէսզի

կարողանայ աղջկան շրջապատել խաղալիկներով ու քաղցրաւէններով, սպանեց իւր մէջ այդ ցանկութիւնը։ Նա սիրում էր սովորաբար խմել մի բաժակ լաւ գինի,—հրաժարուեց և դրանից։ Ամեն ինչ աղջկան, ամեն բան նրան...

Աղջիկը դաստիարակւում էր ինչպէս մի իշխանադուստր։ Նրա համար անհասկանալի էր և չգիտէր «չի կարելի» խօսքը։ Նրա կամքը կատարւում էր անմիջապէս։

Իսկ տարիներն անցնում էին։ Ահա աղջիկը տասն և չորս տարեկան է դառել... Ահա արդէն տասն և հինգ։ Նա գեղեցկուհի է։ Աղջիկը հասկանում էր այդ, որովհետև հայրը չէր թաղցնում նրանից իւր հրճուանքը։

—Մեր գեղեցկուհին...Մեր թագուհին...

Իսկական թագուհի։ Նա ունէր երկու հլու հպատակ դերի—հայրը և

խորթ մայրը, որոնք հետևում էին նրա ամեն մի շարժումին։

Նա մեծացաւ, մեծացան և նրա պահանջները։ Տասն և եօթը տարեկան հասակում նա պահանջեց հօրից դաշնամուր։ Առաջին անգամն էր, որ հայրը անվստահօրէն բացասեց նրան։ Այդչափ դրամ։ Նա չունէր այդ...

Հօր մերժումը զարմացրեց աղջկան։ Նա լաց եղաւ, յետոյ պառկեց և ձեռացրեց թէ մեռնում է։ Հայրը չ'դիմացաւ այդ բանին։

Բամբակը վաղուց նրա վերարկուից դուրս էր թափուել կտոր-կտոր, նա չունէր տաք ոտնամաններ, բայց և այնպէս կատարեց աղջկայ կամքը, գնեց նրա համար դաշնամուր։

Դաշնամուրն էլ վերջ չտուեց նրա ցանկութիւններին։ Աղջկայ պահանջներն աւելացան, քմահաճոյքները սաստկացան և ոչ մի դիմադրութեան չհանդիպելով, օրէցօր զարգացան։

Անեան չէր ընդունում ոչ մի դիմադրութիւն։ Իւր կամքը օրէնք էր նրա համար։ «Տուէք ինձ, տուէք», կրկնում էր նա շարունակ։

Առաջին անգամը չէր, որ հայրը վայ էր տալիս գլխին։ Նա դիմում էր կնոջը, իւր ընկերը համարելով նրան,—«լծող նա համոզէ նրան, խելքի բերէ»։ Բայց աւա՜ղ, կինն աղջկայ հետ էր միացած։ Նա միայնակ է, իսկ զրկել միակ աղջկանը՝ անտանելի է։

Եւ ահա նրանք երկուսով միասին, մայր և աղջիկ, յարձակւում էին նրա վրայ։

Ծերացած հայրը հարկադրուած էր աշխատել, ուժիցը վեր աշխատել, մանաւորապէս և տանը, որպէսզի կարողանայ բաւականութիւն տալ աղջկայ բոպէ առ բոպէ աճող պահանջներին։ Նա ուժասպառ էր եղել, բայց նրան ստիպում էին... Նա նորից էր վազում և դանում։

Կար ժամանակ, որ հօր համար ուրախութիւն և բաղդաւորութիւն էր աղջկայ պահանջներին և քմահաճոյքներին բաւականութիւն տալը։ Այն ժամանակները վաղուց արդէն անցել էին։ Իսկ այժմ այդ պահանջները նրա համար ծանրութիւն, տանջանք և անէծք էին դառել։

Բայց ամենքից ցաւալին և սարսափելին այն էր նրա համար, որ ակներև զարգանում էր աղջկայ եսականութիւնը և մինչև անգամ անխղճութիւնը...

—Աստուած իմ, որտեղից է այս ամենը. որտեղից... Չէ՞ որ նա իւր շուրջը տեսնում էր միմիայն սէր։ Անչափ սէր... Իսկ ընդհակառակը ինչ է այս ամենը, ինչ անխղճութիւն։ Աղջիկը տեսնում է, թէ ինչպէս հայրը յոգնում է ուժից վեր աշխատութեան մէջ և թէ որ ստիճան ուժասպառ է լինում նա,

տեսնում է և չի կանգնեցնում... Ո՛չ։ Դեռ աւելի պնդում և ստիպում է նրան։

Նա պէտք է աշխատէ, ապարատական է, ինքը նրա միակ զաւակն է և արդէն հարմնացու, իրեն հարկաւոր են թատրոններ, կառքեր, հագուստներ։

«Գնալ գողութիւն անել», դուրս թռաւ միանգամ հօր տանջուած սրտից։

Արդեօք աղջիկը մի՞թէ մարեց նրան գոնէ այս անգամ։ Ո՛չ։ Սառն էր նրա պատասխանը։—«Հարկաւոր չէր, որ ինձ աշխարհ բերէիք, եթէ այժմս անկարող էք պահել» Այս էր այն աղջկայ պատասխանը, որին հայրը տուել էր իւր ամբողջ կեանքը։ Ցանկարծ հայրը ուժասպառ ընկաւ սեղանի վրայ։

—Ի՞նչ է պատահել, սիրելիս, դուք առողջ չէք երևում,—նկատեց նրան նոյն օրը պաշտօնակիցներից

մէկը և յանկարծ յիշելով նրա աղջկանը, որին նա իւր հոգին չէ խնայել, հեռաքրքրութեամբ հարցրեց.— առողջ է աղջիկը։

—Օ՜, հրաշալի է հա՜ հա՜ հա՜,— հրհռաց նա։ Ծառայութիւնից վերջը չուզեց գնալ տուն ու սկսեց աննպատակ թափառել փողոցէ փողոց, զգալով հոգու անտանելի դատարկութիւն։ Մութ և սառն էր այնտեղ, ինչպէս նկուղում։

Նա շուտով յոգնեց, մրսեց, քաղցեց, ոչինչ չէր կերել առաւօտուանից, խմել էր միայն մի փոքրիկ բաժակ օղի։ Վաղուց էր, որ նա օղի չէր խմել, այդ պատճառով մինչև անդամ թեթև հարբեց։ Եւ այդ բանը տոնը յայտնուեց։ Աղջիկը համարձակուեց նկատել հօրը այդ բանը, ասելով՝—լաւ է, ինձ համար չկայ, իսկ հարբելուդ համար կայ։

Այդ բանը հօր համբերութեան բաժակը լցրեց։

—Լռիր, իժի դաւակ...

Նա ամբողջապէս ցնցուեց և մոռանալով իրեն, դուրս փախաւ տանից։

Դիշեր էր արդէն, մութ և խոնաւ։ Նա ստուերի նման թափառում էր աննպատակ, ինքն էլ չգիտենալով թէ ուր։ Խաւար, անկենդան էին նրա աչքերը։

Նա լսում էր ինքն իրեն։ Երբեմնակի ծիծաղ էր դուրս թռչում նրա տանջուած կրծքից։

—Հա՜, հա՜։ Այդպէս էլ հարկաւոր էր, այդպէս էլ պէտք էր քեզ։ Ինքդ ստեղծեցիր չարիքը, ինքդ աշխարհ թողիր օձին։ Դու հասկանում ես, որ այդ վէրքը մահացու է, որ սրանից յետոյ ապրելը անհնարին է...

Մայր և աղջիկ առաւօտեան վաղ արշալոյսին միասին դուրս եկան տանից նրան փնտռելու։ Դուռն նրան տան առաջ գտնուող փոքրիկ

այդում։ Դաան նրան միրաւորուած սրտից—այն սրտից, որ մեղանչել էր միմիայն մի բանով— անչափ սիրով։

1029
36 25 38833

ՇՂԹԱՅ

Մարիա Լեհելի

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека

Յունուարի 15-ին, առաւօտեան ժամը տասին մեռաւ Ժարդին։ Այրին փակելով նրա աչքերը, խկոյն լակոնական հեռագրով հաղորդեց սիրածին՝ «եկ, ազատ եմ»։

Դորանից յետոյ նա աղտխնու օգնութեամբ հագցրեց մեռածին, ծածկեց նրան վերմակով, անկողնու մօտ դրեց բուկսուս ծաղկիցը, իջեցրեց վարագոյրները, վառեց մոմը և, հագնելով սև շորերը, նստեց հանգուցեալի բազկաթոռի վրայ։

Եւ այդպէս ամբողջ առաւօտն անցկացաւ զանազան պատրաստութիւններով և անհրաժեշտ ձեւականութիւնների կարգադրութիւններով։ Կէսօրին մօտ այրին հաղորդեցին, որ եկել է Ջալինդրէն և ցանկանում է տեսնել նրան։

Ջալինդրէն, այրու սիրեցեալը,

վոքը ինչ գ՞ունաա, յենուած հիւրասենեակի վառարանին, սպասում էր նրան։

Նրանք երկար համբուրուեցին առանց մի խօսք արտասանելու։ Յետոյ Զալինդրէն սկսեց համբուրել նրա ճակատը, աչքերը, մրմնջալով քնքոյշ և սիրալի խօսքեր։

Նրանք ձեռք ձեռքի տուած նստեցին միասին։ Այդ տեսակցութեան անվտանգ լինելը կարծես թէ զրկել էր նրանց մտածելու ընդունակութիւնից։ Նրանք վաղուց հրազում էին այդ առանձնութիւնը։ Հորս տարուայ ընթացքում քանի քանի անգամ նստել էին այդտեղ սիրուելու, սպասելով ծեր ամուսնու անսպասելի գալստեանը, որի ներկայութիւնը թունաւորում էր նրանց տեսակցութեան քաղցրութիւնը։

Եւ ահա մի քանի օրուայ մէջ հիւանդութիւնը մահացրեց Ժարդիին, որին նրանք համարում էին իրենց բռնակալը, իսկ այժմ նրա կինը

արդէն այրի է և ազատ ամէն իւր ցանկութիւնների։

Այրին ցած ձայնով խօսում էր իւր յոյսերի և ծրագրների մասին։

—Ազատ եմ ես, ազատ։ Երկու օր վերջը մենք կըթողնենք Պարիզը։ Մենք կառանձնանանք մի որ և է ամայի անկիւն և կսիրենք անվախ...

Զալինդրէն մեղմ կերպով ընդհատեց նրան։

—Երկու օր վերջը. այդ ինձ անհնարին է երևում։

—Ինչու համար։ Ո՞վ կարող է ինձ արգելել։

—Հազար տեսակ անխուսափելի ձեւականութիւնները։ Հարկաւոր է պարզել ժառանգութեան հարցը։ Ժարդիի ազգականներն անպայման կըվիճեն իրենց իրաւունքներիմասին։ Այդ ամենը ժամանակ կխլէ, կստեղծէ ահագին դժուարութիւններ, և դու կտեսնես այդ...

Այրին ժպտաց։

—Եթէ միայն այդ կարող է խան-

գարել եմ ծրագրները, դրանից հետո ոչինչ չի կարող լինել. ես միակ ժառանգն եմ։ Մյդ էր քեզ անհանգստացնողը, սիրելիս։

Զալինդրէն խստոյն ընդհատեց նրան

— Քեզ համար միայն, քեզ համար... Մարդիկ միշտ չար են։ Բայց որովհետև դու տեսել ես կտակը ուրեմն այդ միևնոյն է։

—Ես չեմ տեսել կտակը, բայց գիտեմ, թէ ինչ է լինելու։ Այնուամենայնիւ ես խստոյն կրգանեմ։

Այրին դուրս ելաւ։ Զալինդրէն մենակ մնալով սկսեց շրջել սենեակում։—

Հարևան սենեակի դուռը փոքր ինչ բաց էր, ուր աղօտ լուսով վառում էր մեղրամոմը։ Այնտեղ երևում էր մեծ և սպիտակ անկողինը։ Նա տեսաւ թէ ինչպէս իւր սիրուհին, մտնելով սենեակը, սկսեց քրքրել կահկարասին։ Այդ բոլորը ծանր տրպաւորութիւն թողեց նրա վրայ։

Նա շփոթուած նայում էր պատկերներին և գորգերին, բայց նրա այդ շփոթութիւնը աստիճանաբար փոխուեց անբացատրելի ուրախութեան, մտածելով, որ այդ օրուանից բոլորը պատկանելու է իրեն, որ ինքն այժմ հարուստ է։ Միայն թէ մի ինչ որ նախազգացում ճնշում էր նրան, երբ վերադարձաւ իւր սիրուհին, ձեռքին բռնած կարմիր կնքով կնքուած մի մեծ ծրար։ Այրին բացեց ծրարը, Զալինդրէն նկատեց թէ ինչպէս իւր սիրելին յանկարծ գունատուեց և ցնցուեց։ Նա վրայ ընկաւ, խլեց այրիի ձեռքից թուղթը և կարդաց,

— «Իմ բոլոր հարստութիւնը կտակում եմ ընկեցիկ երեխաների ապաստարանին։—Ժարդի»։

Զալինդրէն թերթը յանձնեց այրիին։

Երկուսն էլ ապշած մնացել էին։ Այդ երկու տողերը ոչնչացնում էին նրանց բոլոր ծրագրները։ Այրին կտակը բռնած մրմնջում էր.

—Այդ չլսուած բան է... Այդ չտեսնուած բան է...

—Ա՜խ, մեր երազածները որ հեռու են այժմ,—պատասխանեց Շալինդրէն այրիին։—Դու հինգ ըսպ. առաջ խոստում էիր երկու օրից հեռանալու մասին... մի տարի վերջը լինելիք մեր պսակադրութեան մասին....

—Բայց այդ դեռ կարելի է... հարկաւոր չէ հարուստ լինել. երբ սիրում ես...

Շալինդրէն ծիծաղեց։

—Բայց ինչով ապրենք։ Դու ոչինչ չունես, գիտես որ ես ևս ոչինչ չունիմ։ Այդ կլինէր ադքատ զոյութիւն. . Այդ մասին չարժէ այլ ևս մտածել։ Ես գնում եմ։ Ո՞ւր։ Չը գիտեմ, բայց մնալ Պարիզում ես չեմ կարող այժմ։

—Ինչու աւելի այժմս, քան երբեկ։ Ի՞նչ փոփոխուեց

Ի՞նչ փոփոխուեց։ Եւ հարցնում ես դու։ Դու մոռացար, որ քո

պատճառով, միայն քո պատճառով է, որ ես ապրում եմ այստեղ։—Վիրաւորական խօսքերի մի ամբողջ հեղեղ յուղեց նրա հոգին և դուրս ժայթեց։ Նրա խաղաղ ձայնը փոխուեց և սկսեց որոտալ։ Զարուքիեան փայլ երևաց նրա մոխրագոյն աչքերում։

—Ի՞նչ փոփոխուեց։

Ծամծմելով կրկնում էր նա այդ խօսքերը կատաղութեամբ, շտապշտապ քայլելով հիւրասենեակում, զայրացած, ոտներով ցիր ու ցան էր անում կահ-կարասին ու բարձերը։

—Քեզ լաւ յայտնի է, որ չորս տարուայ ընթացքում ոչ թէ ոչինչ չեմ արել իմ դրութիւնը բարւոքելու համար, նոյն իսկ զրկել եմ ինձ մի որևէ գործ որոնելու հնարաւորութիւնից։ Երբ դու ցանկանում էիր որ միշտ, ամեն ըսպէ քեզ մօտ լինէի, կարող էի ազատ ժամանակ ունենալ զբաղուելու անձնական գործերով։ Ի՞նչ ես կարծում։ Միայն նրա համար, որ տիկին X... դիւր

չէր գալիս քեզ, ես պարտաւոր էի չընդհատել նրա մօտ և կարել յարաբերութիւններս նրա բոլոր ծանօթների հետ։ Տիկին Շ... վատ էր խօսում քո մասին, և ես պարտաւոր էի նրան արհամարհել։ Քո քմահաճոյքների և յիմար նախանձի պատճառով, այդ կերպ իմ բոլոր կապերը խզուեցին։ Ես այն ժամանակ ներում էի այդ բոլորը, այժմ միայն զգում եմ իմ անտեղի և յիմար վարմունքը։ Պարիզի փողոցներում ես կզգամ ինձ աւելի միայնակ, քան անապատում։ Ինձ շրջապատում են անհաշտ թշնամիներ, իսկ դու հարցնում ես՝—ինչ փոփոխուեց,

Այրին դառնութեամբ տեսնում էր նրա անզուսպ զայրոյթը և խօսք չէր գտնում պատասխանելու, բացի հետևեալ խօսքերից՝

—Ի՞նչ անիրաւն ես դու... Ի՞նչ անիրաւը...

Զալինդրէն ծալեց ձեռները։

—Կարող ես դու ինձ մի ելք

առաջարկել։ Ո՞չ։ Ուրեմն այդ դէպքում մի ասել, որ անիրաւ եմ։ Դու բաւական ժամանակ քնացնում էիր ինձ, որ չվախենամ։ Դու խօսում էիր ինձ հետ «քո հարստութեան» մասին, «քո անկախութեան մասին», ապագայում ունենալիք «ազատութեանդ» մասին։ Ա՜խ, որչափ լաւ էր այդ՝—հարստութիւն, անկախութիւն, ազատութիւն։ Այժմ ինչ պէտք է անեմ ես։

Այրին բարձրացրեց գլուխը։

—Դու ամեն ժամանակ խօսում ես քո մասին։ Ապա իմ դրութիւնը քո կարծիքով նախանձելի է։

—Այդ այլ բան է։ Երիտասարդ կինը ամեն ժամանակ դուրս կպրծնի չարիքից, մինչդեռ ես կմնամ վտանգի մէջ։ Մի շաբաթ սրանից առաջ յանձն առայ պարտաւորութիւններ, որ այժմ անկարող եմ կատարել։

Այրին կանգնեց և շեշտելով կրկնեց նրա ասածը.

—Դու յանձն ես առել պարտա-

սրութիւնները։ Ի՞նչ իրաւունքով։ Ի՞նչու վրայ էիր գրել յոյսդ։ Իմ հարստութեան։

Յանկարծ՝ այրիի աչքերը բացուեցին։ Զալիդրէն երևայ նրան իւր իսկական պատկերով՝ ագահ, անձնասէր և ստախօս։ Այդքան տարի նա խաբում էր քնքոյշ՝ ձևանալով,

—Ուրեմն դու յոյսդ գրել էիր այն հարստութեանը, որ դեռ ինձ չէր պատկանում։ Հորս տարուայ ընթացքում, երբ ես բոլոր ժամանակը հաւատում էի քո սիրուն, դու աչքի առաջ ունէիր միայն այն, որ դիրք ձեռք բերես։ Դու խնայում էիր ինձ միայն նրա համար, որ աչք էիր դրել իմ հարստութեանը, իսկ այժմ երբ տեսար, որ օժիտը պլուում է քեզանից, և քեզ մնում է միմիայն կինը, դու արդէն թափում ես քո չարութիւնը։

Զալինդրէն աշխատում էր հերքել։

— Ո՛չ, ոչ։ Մի պաշտպանուիր։ Երբ մտածում եմ, որ ես քեզ սի-

րում էի.,. Ո՜րպիսի ամօթ։

Նրանք համբերութիւնից դուրս գալով, սկսեցին չարացած նախատել, վիրաւորել և արհամարհել իրար։ Առաջին անգամն էր, որ նրանք լաւ հասկացան իրար։ Անչափ էր նրանց կատաղութիւնը։ Մէկ խօսքով՝ գտնելով մի տեսակ վայրենի ուրախութիւն անձնական վրդովմունքների մէջ, շարունակում էին վիրաւորել իրար, արհամարհել ամենաթանկագին յիշողութիւնները։

Այդպէս անցկացաւ մի քանի ժամ։

Երեկոյ էր, երբ աղախինը յայտնեց, թէ եկել է նոտարը։

—Խնդրեցէք, թող ներս գայ,— պատասխանեց այրին։

—Տիրուհի, ասաց նոտարը, պարոն Ժարդին մի քանի օր առաջ յանձնարարեց ինձ, հաղորդել ձեզ իւր վերջին կամքը մեռնելուց անմիջապէս յետոյ։ Նրա կամքը յատնուած է տնա այս ծրարի մէջ։

Տանտիրուհին առաւ ծրարը ասելով՝

— Ինձ յայտնի է այդ, պարոն։ Ես գիտեմ...

Նա մեքենայաբար բացեց ծրարը և յանկարծ ցնցուեց։

—«Կտակում եմ իմ ամբողջ կարողութիւնը կնոջս միակ և պարտաւորեցուցիչ պայմանով, որ նա ամուսնանայ պարոն Շալինդրէի հետ։ Պարիզ, 6 յունուարի, 1902 թ.։ Ժարդի»։

Նոտարը աւելացրեց։

—Ձեր ամուսինը յանձնարարեց նոյնպէս յանձնելու ձեզ և այս նամակը։ Ես կատարեցի իմ պարտականութիւնը և հեռանում եմ, սպասելով ձեր կարգադրութեանը։

Նոտարը ողջունեց ու հեռացաւ։

Նամակը գրուած էր յունուարի 6-ին, կտակի թուով, հետևեալ բովանդակութեամբ։ «Տիկին, երբ ես ամուսնացայ ձեզ հետ, դուք քսանհինգ տարեկան էիք, իսկ ես վաթսուն։ Դուք աղքատ էիք, իսկ ես հարուստ։ Կապելով ձեր կեանքը իմի

հետ, ես գործեցի մեծ յանցանք։ Ես չպահանջեցի ձեզանից սէր։ Ես համարեա պատրաստ էի ներել ձեզ, դէպի ինձ ունեցած ձեր անհաւատարմութիւնը, եթէ դուք այդ արած չլինէիք ցինիկօրէն։ Վերջին օրերը, երբ դուք հաստատ գիտէիք, որ մեռնում եմ, չուզեցաք մինչև անգամ ծածկել ինձանից այն, որ նայում էիք իմ մահուանը ինչպէս մի ապատուութեան։ Ձեր սիրականը հարևան սենեակում ծածկաբար սպասում էր իմ մահուանը, որպէսզի առանց ուշացնելու բռնէ իմ տեղը։ Դուք յանցաւոր էիք դրանով։ Դեռ վերջին շունչս բերանումս, դուք երկուսով կընկնէք իմ կտակի վրայ։ Կկարդաք այնտեղ, որ ես զրկում եմ ժառանգութիւնից, իսկ ինքս շատ լաւ գիտեմ ձեր ընկերի հոգին և համոզուած եմ, որ նա այժմս ձեզ աղքատ համարելով, անտարբերութեամբ ձեզանից երես կըդարձնէ այնպէս, ինչպէս երես դարձնել տը-

ունեց իւր պարտականութիւնից հարուստ կնոջը, որ ձեզ էր համարում։ Եւ ահա, նրան լաւ ճանաչելով, եթէ դո՛ք կամենում էք պահպանել ձեր հարստութիւնը, պարտաւոր էք ամուսնանալ նրա հետ և այնուհետև կապուած կլինէք մի անպիտանի հետ, որին պիտի արհամարհէք դուք։ Այդ իմ վերջին ուրախութիւնն է, փակել աչքերս այն համոզումով, որ կապում եմ ձեր ոտքերը այդ շղթայով»։

Այրին կարդաց նամակը կիսաձայն և, հասնելով մինչև վերջին տողը, արտասուելով ընկաւ բազկաթոռի վրայ։ Զալինդրէն երբ մօտեցաւ նրան մխիթարելու, նա լցուեց զարհուրելի արհամարհանքով և խորին զզուանքի զգացմունքով։ Նա զգաց, որ իրեն շղթայողը մարդու վրէժն էր, և նետելով նամակը իւր նոր պարոնի երեսին բղաւեց՝

—Անպիտան, անպիտան։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՊԿ — СССР

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին
և Թարգմանչին՝ Тифлисъ, Михайлов-
ская, № 60.

85

2013